

ՍՄԱՐԱՑ ՍՄԱՐԱԶԱՆԻ ՀԲԱՆՈՒՄԻ ՈՒՂԵՐՁԸ

(Խօսուած Գանձիւրի Ս. Գրիգոր Լուսաւորչի
Եկեղեցւոյն մէջ)

Երջանիկ է Պատգամաւորութիւնս որ
յանուն Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց
Միաբանութեան բարեբախտութիւնը կ'ու-
նենայ հրաւիրելու և առաջնորդելու Ձեր
Ամենապատուութիւնը յԱթոռ Առաքելա-
կան Սրբոց Յակոբեանց:

Սրբազան Հայր, Միաբանութիւնս ա-
ւելի քան տարիուկէս առաջ գառնապէս
ողբաց իր պատուական հոգեւոր պետին Եր-
ջանկայիշատակ Տ. Տ. Եղիշէ Սրբազան Պա-
տրիարքին կորուստը: Արդարեւ մեծ կո-
րուստ զոր ամբողջ Ազգն ալ ողբաց իրա-
ւամբ: Օրհնեալ ըլլայ իր պանծալի յիշա-
տակը:

Միաբանութիւնս թէ և խորապէս ընկ-
նուած այս ծանր հարուածին ներքեւ, զի
մտքի, սրտի և հոգիի լուսաւոր աստղ մը
կը նուազէր, սակայն հաւատարիմ իր պար-
տականութեանց, փութաց ըստ օրինի կա-
տարել Տեղապահին ընտրութիւնը, ձեռնար-
կելու համար յաջորդ Աթոռակալի ընտրու-
թեան:

Միաբանութիւնս, Տեղապահ Գերա-
շնորհ Տ. Մեսրոպ Սրբազանի շրջահայեաց
վարչութեան ներքեւ, երբ ձեռնարկեց ըն-
տրական գործին, երկու կարեւոր պարտա-
կանութիւններու առջև դնուեցաւ. առա-
ջին, համաձայն նոր կարգերու գտնել պա-
տրիարքական ընտրութեան նոր եղանակ մը,
և երկրորդ, որոշել մեր Պատուական Ազ-
գին թանկագին համակրութիւնը վայելող
սրբազան ընտրելին: Այս շատ կարեւոր
պարտականութիւնները օգնութեամբ Ամե-
նակալին կատարուեցան:

Միաբանութիւնս, քրիստոնեայ աշ-
խարհին համար մեծ նշանակութիւն ունե-
ցող Սուրբ Երկրին մէջ, որպէս Հայ Առա-
քելական Եկեղեցւոյ ներկայացուցիչ և ա-
նոր Սրբազան Իրաւանց պահապան, պար-
տաւոր էր Պատրիարքական ընտրութեան
օր առաջ կատարուելուն հոգածու ըլլալ,
որպէսզի թէ Աթոռը երկար ատեն առանց
Գահակալի չմնայ, որ անշուշտ փրասակար
պիտի ըլլար իր շահերուն, և թէ պատրի-
արքական ընտրութեան եղանակին և յա-

րակից կանոնական խնդրոց վերջնական
կարգադրութեան վերաբերեալ րանակցու-
թիւնները վարելու իրաւասու Պետն ունե-
նայ, Իսկ Ընտրելի մասին իր ուշադրու-
թիւնը կեդրոնացուց Ձեր Բարձր Սրբազ-
նութեան վրայ այն իրական արժանիքնե-
րուն համար զոր ունիք: Դուք, Սրբազան
Հայր, Ձեր հոգեւորականի չքնաղ շնորհնե-
րովը, սրբազան ներշնչութեամբ օծուն
մտքի զարգացումովը և ազգային մաքուր
զգացումներով տողորուած վարչական բե-
ղուն գործունէութեամբը, փառաւորած էք
արդէն Հայ Եկեղեցին ու Հայ Ժողովուրդը:

Միաբանութիւնս նկատի ունեցած է
նաեւ Ձեր Սրբազնութեան բարոյական ու
նիւթական այն ծառայութիւնները, զորս
Երուսաղէմի Պատրիարքութեան պատմու-
թիւնը օրհնութեամբ պիտի յիշատակէ:

Հետեւաբար, Միաբանութիւնս, Ձեր
Սրբազնութեան մաքրակենցաղ կեանքը և
Եկեղեցւանուէր յայտնի գործունէութիւննե-
րը աչքի առջև ունենալով, ընտրեց Ձեր Ա-
մենապատուութիւնը Պատրիարք Հայոց Ե-
րուսաղէմի, պատշաճեցնելով ընտրութեան
նոր եղանակը Միաբանական Կանոնադրին
եւ Սուրբ Աթոռի նուիրական աւանդու-
թեանց:

Միաբանութիւնս իր կատարած աշ-
խատութեանց արդիւնքէն մեծապէս գոհ
մնաց, որովհետեւ Ձեր Ամենապատուու-
թեան ընտրութիւնը ջերմ համակրանքով
և յարգանքով ողջունուեցաւ ընդհանուր
Ազգին կողմանէ, սկսեալ Ամենայն Հայոց
Ընդհանրական Հայրապետութենէն, միւս
հոգեւոր ու վարչական բոլոր պետերէն մին-
չև պաշտօնական մարմիններն ու համայն
Ժողովուրդը: Այստեղ պէտք է յիշատակել
նաեւ Պաղեստինի Բարձր Կոմիտէութեան
և Երուսաղէմի Կառավարչութեան կողմէ
յայտնուած այն զնահատութիւնները ո-
րոնցմով ի վեր կը հանէին ընտրեալիդ ար-
ժանաւորութիւնը:

Միաբանութիւնս ի բոլոր սրտէ, բայց
ինչու՞ չըսենք բոլոր Ազգը, հրճուեցաւ երբ
Մեծն Բրիտանիոյ Օգոստափառ Թագաւոր-
Կայսեր կողմէ Ձեր Ամենապատուութեան
պատրիարքական պաշտօնին վաւերացումը
շնորհուեցաւ:

Սրբազան Հայր, կը սիրենք հաւատալ
թէ յանձին Ձեր Ամենապատուութեան կա-

տարուած այս ընտրութիւնը նախախնամական տնօրինութիւն մըն է, զի Երջանկալիչատակ Դուրեան Սրբազանի վախճանումէն յետոյ անոր հետ Ձեր ունեցած աշակերտական, մտաւորական և հոգեւորական կապերը հայ մտքին ու զգացումներուն նըկատել տուին թէ Հոգեւոյս Դուրեանի մեծ հոգին կ'ապրի Ձեր մէջ, ինչպէս Երբեմն Հին Ուխտի Եղիային հոգին վերադրեցաւ Եղիսէին մէջ. հետեաբար անոր թափուր թողած պատրիարքական գահուն ալ իրաւատէր ժառանգը նկատուեցաք: Փա՛ռք Տեառն որ բոլորին բուն բաղձանքը իր լրումը գտաւ:

Սրբազան Հայր, չեմ վարանիր յայտարարելու թէ Միաբանութիւնս Ձեր պատուական անձին մէջ կը տեսնէ Ս. Լուսաւորչի հաւատքին անչէջ լոյսը, Ս. Թարգմանչաց ոսկեղէն դրականութեան յարաճուն սէրը, և Իսրայէլի ազատարար Մարգարէին արիասիրտ և նախանձախնդիր ոգին, որոնցմով պիտի կատարէ իրեն համար այնքան նուիրական եղող գործերը: Պատրաստել Հայ Եկեղեցւոյ փառքին և անոր Տնօրինական Սուրբ Տեղեաց մէջ ունեցած պաւոր իրաւունքներուն հաւատարիմ և անձնուէր հոգեւորականներ, հասցնել Հայ մշտաւորական անդամատանին բարգաւաճման նուիրուած ժիր և անխնայ մշակներ, եւ ընդգրկել վարչական ու տնտեսական այն անհրաժեշտ ուղղութիւնները որոնցմով հընարաւոր ըլլայ ազատել Ս. Աթոռը պարտքի գերութեան ծանր լուծէն:

Սրբազան Հայր, Միաբանութիւնս պարտականութիւն կը նկատէ Ձեր Ամենապատուութիւնը հաւատարացնել թէ Ձեր աթոռանուէր ու օգտաշատ գործունէութեանց բոլոր մարդերուն մէջ պիտի բերէ միշտ իր բոլորանուէր գործակցութիւնն ու ծառայութիւնները մինչև իր կարողութեան յետին մասնիկը ի սպաս գնելով. և այս ո՛չ միայն ի պարտականութենէ զրդեալ, որ

միշտ նուիրական եղած է իրեն համար, այլ մանաւանդ Ձեր Սրբազնութեան ճարտար ղեկավարութեան շնորհիւ, որ պիտի լծէ բոլորս իր իմաստուն, արդիւնալից ու ազգաշէն գործունէութեանց շրջանակին:

Ահա մեր բոլոր մտածումները, յոյսերն ու փափաքները ջանացինք պարզել հակիրճ կերպով և անկեղծօրէն: Արգ, Սրբազան Հայր, նոյնքան և աւելի անկեղծ ու վճիռ զգացումներով տողորուած Միաբանութիւնս ջերմադին խանդավառութեամբ կը շնորհաւորէ Ձեր Ամենապատուութեան Սրբոց Յակոբեանց Առաքելական Աթոռոյ պատրիարքական պաշտօնը, սրտեռանդն մաղթելով արեւշատութիւն և ամէն յաջողութիւն:

Ուրեմն, ո՛վ մեր սիրելի Հայրը ու պատուական պետը, հաճեցէք շնորհել Ձեր հըրամանը ժամ առաջ մեկնելու դէպի Ս. Աթոռ, ուր ակնդէտ կը սպասէ Միաբանութիւնս իր արժանընտիր Գահակալին, որ պէսպի վերցնէք Սուրբ Աթոռի վրայէն սուգի սե քողը և բառնաք մեր սրտերէն տըրտմութեան թախիծը և հովանաւորէք Սիոնի որդիներդ ու Ձեր չքնաղ կեանքովն ու գործունէութեամբ խրախուսէք զմեզ աւելի եւ ունեղով և նուիրումով ծառայելու համար Առաքելական Սուրբ Աթոռին, մեր սիրելի Մայրենի Եկեղեցիին և բաղմակարօտ Հայ Ժողովուրդին:

Այս բարեբաւտիկ պատեհութեամբ ի բոլոր սրտէ կ'աղօթենք առ Ամենաբարին Աստուած, որպէսզի հաստատուն պահէ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին իր բաղմաշարչար ժողովուրդով, և իր նուիրական Աթոռներով: Տէրը պահէ պահպանէ մեր ազգային բոլոր հաստատութիւնները ու անոնց անձնուրաց վարիչները: Աստուած իր Հզօր Աջին պաշտպանութիւնն ու օգնականութիւնը շնորհէ Ձեր Ամենապատուութեան, ի փառս Սուրբ Աթոռոյ և Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյս:

